600.0044.28.06.02.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 հունիսի 2002 թվականի №44Ա
ք.Երևան

«Անի» բաց բաժնետիրական ընկերության «Ջրաձոր» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման № 0062 լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգելու մասին

Հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածը, «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ կետը, ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2002 թվականի հունվարի 30-ի №4 որոշմամբ հաստատված կարգը, ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Բավարարել «Անի» բաց բաժնետիրական ընկերության ներկայացրած հայտը և ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2001 թվականի հուլիսի 17-ի №34 որոշմամբ սահմանված՝ «Ջրաձոր» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման №0062 լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգել մինչև 2004 թվականի հուլիսի 17-ը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի նախագահ՝ Վ.Մովսեսյան

28 հունիսի 2002թ.
ժ.16[00]
Երևան